Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 22

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Գ. Արշակյանը, Մ. Դատումյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը, Ա. Խաչատրյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ն. Անդրեասյանը, Ս. Բաղալյանը, Բ. Վարդանյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալներ Ա. Ներսիսյանն ու Վ. Սաֆարյանը, մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը, բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> N 196-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
/Զեկուցող՝ Շ. Վահանյան/
3. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 09.12.2022թ. N 178-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
4. Աշտարակի համայնքապետարանի համայնքային ոչ առևտրային կազմակերպություններն անվանափոխելու և կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
5. Հայաստանի Հանրապետության և Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

6. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

7. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 28.12.2022թ. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> N196-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեի 1-6-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ: Զեկուցողը, մասնավորապես նշեց, որ համայնքի բյուջեում կատարվել են վերաբաշխումներ՝ հաշվի առնելով 2022 թվականի ընթացքում առաջացած ազատ մնացորդը:

Բարձրացված հարցերին Շանթ Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 09.12.2022թ. N 178-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի

ավագանու 09.12.2022թ. N 178-Ա որոշման 28, 29, 31, 32, 33, 34, 35, 36 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ:

Զեկուցողը նշեց, որ սույն որոշման նախագծի ընդունմամբ հստակ տարանջատվում են ընտանեկան բժշկի և տնօրենի հաստիքային միավորները, ինչը գործող օրենսդրության պահանջն է, մասնավորապես՝ <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքի համաձայն պետական, տվյալ դեպքում՝ համայնքային ոչ առևտային կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Բարձրացված հարցերին Սամվել Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - *Աշտարակի համայնքապետարանի համայնքային ոչ առևտրային կազմակերպություններն անվանափոխելու և կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 102-րդ հոդվածի 3.2-րդ կետի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 08.04.2021թ. N 515-Ն որոշման պահանջներով, Աշտարակի համայնքապետարանի համայնքային ոչ առևտրային կազմակերպություններն անվանափոխել՝ համաձայն հավելված 1-ի:

Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրություններում կատարել համապատասխան փոփոխությունները և հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17 հավելվածների: Հանձնարարել համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին՝ 15-օրյա ժամկետում ապահովել կանոնադրությունների փոփոխությունների պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում: Ս. Սահակյանը, մասնավորապես նշեց, որ որոշման նախագծով առաջարկվում է վերացնել համայնքապետարանի ենթակայության

նախադպրոցական ուսումնական հաստատությունների կանոնադրություններում առկա անհամապատասխանությունները:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 5</u> - Հայաստանի Հանրապետության և Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 6</u> - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրում հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ Համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 28.12.2022թ. N2/փ-306 դրական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման

հաստատված կարգի 17-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի Օհանավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-112-0144-0108 ծածկագրով 0,4477հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նաշանակության փոփոխությունը:

22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 7</u> - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, համաձայնություն տալ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել:

Զեկուցողը նշեց, որ փոփոխության դեպքում նրանք պարտավոր են վճարելու կադաստրային արժեքների տարբերությունը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 8</u> - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66 հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21 կետի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, ուղղակի վաճառքով օտարել Աշտարակ համայնքի բնակավայրերում առկա հողատարածքները:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

22 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2023 թվականի հունվարի 19-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ _____

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ _____

ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ _____

ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____

ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____

ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____

ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ _____

ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ _____

ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ _____

ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ _____

ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ _____

ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ _____

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ _____

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ _____

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ _____

ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ